

ասոնք են ծաղկին դէմ ընելու ամենէն պատշաճ ու բժշկութեան ալ ցուցուցած դարմանները :

Սէկուն տարիքը որչափ որ քիչ է , այնչափ ալ աս հիւանդութիւնը թեթեւ կ'ըլլայ :

Բ . Պատրաստութիւն : — Ինչ օրհասներ պէտք է տալ , ան հնարագէտ մարդուն որ այսպիսի ահաւոր հիւանդութեան մը դէմ նախապահեատ դեղ մը գտաւ : Լա ահա աս մարդն է Ղէնէնէր անգլիացի բժիշկը , որ այսպիսի մեծ բարիք ըրաւ մարդկութեան . ուստի և կ'արժէ որ իր վըայ հոս տեղեկութիւն մը տանք :

Եղուարդ Ղէնէնէր ծնաւ 1750<sup>ին</sup> մայիսի 7<sup>ին</sup> Կըսթընթըրի կոմսութեան Պէրքլէյ քաղաքը : Բաւոնքը մեծ գովութեամբ լմնցընելէն ետքը ինքզինքը բժշկութեան տուաւ : Սկսաւ 1776<sup>ին</sup> ծաղկի վրայ խորունկ քննութիւններ ընել , աս համաճարակ հիւանդութեան դէմ նախապահեատ մը փնտռել , և 1798<sup>ին</sup> իր գիտերը գրքով մը հրատարակեց : Իրմէ առաջ Լ'նգղիոյ քանի մը գաւառներու մէջ աս բանս դիտեր էին որ կովու պատուաստ առնողներուն ալ մէնն ալ ինչուան ետքը ծաղկէն ազատ մնացեր էին . բայց որպէս զի աս ուամ կաց մէջ տարածուած կարծիքը օգուտ մը բերէ , պէտք էր որ գիտուն մարդիկ ալ զանազան փորձերով հաստատելին թէ կովու պատուաստը իրաւքնէ ապահով օգտակարութիւն մը ունի , և ահա աս բանս ըրաւ Ղէնէնէր : Վսանըհինգ տարի այնչափ փորձեր ու տեսակ տեսակ դիտողութիւններ ըրաւ , որ ալ աս դեղին զօրութեանը վրայ մտքին մէջ ամենեւին տարակոյս չմնաց :

Ղէնէնէր իր գրքին մէջ կ'ըսէր թէ պատուաստի շարաւր պիտի առնուի կովու ծիծերուն պտուկին վրայ դուրս տուած պալարէն : Իս իրեն կարծիքն ալ ուրիշ նորեւուկ բաներու պէս առջի բերումն արհամարհուեցաւ . բայց վերջապէս ստուգութիւնը փորձով հաստատուեցաւ : Վաղղիոյ մէջ 1800<sup>էն</sup> ի վեր

սկսաւ տարածուիլ Սոփուքոյ-Ի իանքու դքսին մարդասիրական ինստիտուտը , ու շատ անուանի բժիշկներուն ջանքովը : Ղէնէնէր վեհանաճութեամբ չէր ուզած ամենեւին վարձ մը կամ փոխարէն մը առնուի իր գիտին համար . մանաւանդ թէ մեծամեծ ծախքեր ալ ըրեր էր որ անոր օգտակարութիւնները տարածէ : Լ'նգղիոյ խորհրդարանը որոշեց որ շնորհակալութիւն մը ըլլուի իրեն . և 1809<sup>ին</sup> վեց հարիւր հազար ֆրանք սահմանեց որ տրուի իրեն : Լոնտոնի մէջ ընկերութիւն մը հաստատուեցաւ ծաղկի հիւանդութիւնը վերջացընելու համար . և Ղէնէնէր ան ընկերութեան նախագահն եղաւ : Լ'նգղիոյ ծովային թագաւորական վերաբոյժներն ու բժշկները Ղէնէնէրին համար պղնձէ պատկեր կամ մետաղ մը կոխել տուին , որուն մէկ կողմը ձեւացած է Լ'պողոն , որ Եթէն Երիտանիոյ նաւաւար մը կ'ընծայէ պատուաստով ծաղկէն ազատած . մէկալ կողմն ալ Լ'նգղիոյ այլաբանական պատկերը նկարուած է ձեռքը քաղաքական պսակ մը բռնած , պսակին մէջ ալ Ղէնէնէրին անունը գրուած :

Իս հռչակաւոր բժիշկը Պէրքլէյ քաղաքին մէջ մեռաւ յունուարի 26<sup>ին</sup> 1823<sup>ին</sup> կաթուածի հիւանդութեամբ . և 1828<sup>ին</sup> Կըսթընթըր քաղաքին մայր եկեղեցւոյն մէջ իրեն համար ճերմակ մարմարիսնէ արձան մը կանգնեցին :

#### ԱԶԳԱՅԻՆ ԿԱՄ՝ ՀԱՅԱԽՕՍ ԱՌԱՎ

Ո՛ր խաչին մատաղ ասայ , ոչ երեխին բլիթ :

Որդին գնայ՝ հէրը հետը ,

Մալը գնայ՝ տէրը հետը :

Ուզողը գգաւով չեն ջրել :

Ուզողը կորցրելէս , քեօշակին ման ես գալի :

Ուզողը վեր ըլլողը , կուզէ կուզ ման չի գալի :

Ուզալին ասին , Ընչի այ վիզդ ծուռը . ասեց , Վո՛ր

տեղս այ գուզ , որ վեզս գուզ ըլլի :

Ուզալին քուշայ հարկաւոր , վիզը թող ծռի :

Ուրադն իր կովը չի տալի :

Ուրիշի ձեռովը օձ բռնիլ :